ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 15. Խախտման վերաբերյալ արձանագրությունը և դրա բովանդակությունը

Խախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը կազմում են տեսչական մարմնի ծառայողները՝ երեք օրինակից:

Խախտման վերաբերյալ արձանագրությունում նշվում են՝

- արձանագրությունը կազմելու ամիսը, ամսաթիվը և տեղը.
- արձանագրությունը կազմող անձի պաշտոնը, անունը, ազգանունը.
- տեղեկություններ՝ խախտում թույլ տված քաղաքաշինության գործունեության սուբյեկտի մասին (գործունեության հասցեն, անվանումը, ղեկավարի կամ պատասխանատու մասնագետի կամ նրա լիազորած անձի անունը, ազգանունը, բնակության հասցեն).
- խախտումը կատարելու տեղը, ժամանակը և բնույթը.
- գործի քննության ժամկետները.
- խախտման վերաբերյալ քաղաքաշինության գործունեության սուբյեկտի կամ նրա լիազորած անձի բացատրությունը.
- գործի քննության համար անհրաժեշտ այլ տեղեկություններ:

Արձանագրությունն ստորագրում են այն կազմող անձը և խախտում կատարած քաղաքաշինության գործունեության սուբյեկտը կամ նրա լիազորած անձը, որին ստորագրությամբ հանձնվում է արձանագրության մեկ օրինակը:

Եթե խախտում կատարած քաղաքաշինության գործունեության սուբյեկտը կամ նրա լիազորած անձը չեն ստորագրում արձանագրությունը, ապա այդ մասին արձանագրությունում նշում է կատարում այն կազմող անձը:

Խախտում կատարած քաղաքաշինության գործունեության սուբյեկտը կամ նրա լիազորած անձն իրավունք ունի ներկայացնել արձանագրությանը կից լրացուցիչ բացատրություններ և դիտողություններ, ինչպես նաև շարադրել արձանագրությունն ստորագրելուց հրաժարվելու իր շարժառիթները:

Արձանագրությունն ստորագրելուց և այն ստանալուց հրաժարվելն իրավաբանական անձին չի ազատում սույն օրենքով նախատեսված պատասխանատվությունից:

Արձանագրությունն ստորագրելուց հրաժարվելու դեպքում այն իրավաբանական անձին ուղարկվում է «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 10-րդ հոդվածով սահմանված կարգով կամ փոստով:

(15-րդ հոդվածը փոփ. 09.07.20 ՀՕ-367-Ն, խմբ., փոփ. 16.11.22 ՀՕ-434-Ն)

Հոդված 20. Գործի վերաբերյալ որոշման հանձնումը

Գործի վերաբերյալ որոշումը երեք օրվա ընթացքում հանձնվում կամ ուղարկվում է քաղաքաշինության գործունեության սուբյեկտին (պատասխանատու անձին) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով: Որոշումը հանձնվում է ստորագրությամբ: Եթե որոշումն ուղարկվում է, ապա այդ մասին համապատասխան նշում է կատարվում գրանցման մատյանում:

(20-րդ հոդվածը փոփ. 16.11.22 ՀՕ-434-Ն)